




# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



## ԳԻՐՔ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑՈՒՆ

Մեր եկեղեցական գրականության կարևոր դեմքերից է ԺԱ. Դարի մատենագիր Անանիա Սամահնեցին: Նրա կյանքին ու գործունեությանը, մատենագրական ժառանգության ուսումնասիրմանն ու բնագրերի հրատարակությանն է նվիրված Երևանի Մատենադարանի «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց» խմբի ղեկավար, Հակոբ Քյոսեղանի «Անանիա Սամահնեցի» գիրքի առաջին հատորը<sup>1</sup>: Գիրքը տպագրվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հրամանավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Այս մենագրությունում Անանիա Սամահնեցու գործունեությունը ներկայացվում է ժամանակի եկեղեցա-քաղաքական ընդհանուր համապատկերում: Համանման ձևով նրա ստեղծագործությունները քննվում են ոչ միայն Հայրատ-Սամահնեցին դպրոցի շրջանակներում, այլև հարաբերվում են Նարեկան դպրոցի ու հատկապես Անանիա Նարեկացու ստեղծագործությունների հետ՝ դիտարկվելով ժ-ժԱ. Դարերի գրական շարժման մեջ, որպես այդ շարժման եկեղեցա-դավանաբանական և մեկնարանական կարևոր արտահայտություններից մեկը, որն իր վրա կրում էր Բագրատումյաց թագավորության ամենան առաջին տասնամյակների քաղաքական անորոշությունների, սպասումների ու ակնկալիքների, ինչպես նաև այդ տարիների հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների կնիքը:

Անանիա Սամահնեցին այն հեղինակներից է, որոնց գործերի քննությունից առաջ հետազոտողը նախ պետք է ամորադառնա դրանց հեղինակային իրավ պատկանելության և ապա այն հարցերին, թե ձեռագրային մի շարք խմբագրություններով վկայված տարրերակներից որ մեկն է բնագրային առումով ավելի հարացատ և սկզբնագիր, և ապա անցնի այդ ստեղծագործությունների վերլուծությանը:

<sup>1</sup> Հ. Քյոսեղան, Աստվածաբանական բագ ուներ, ուսումնասիրություններ, Ա. Անանիա Սամահնեցի, Ս. Էջմիածնի, 2000, 408 էջ:

Ինչպես ԺԲ-ԺԳ դարերում «Վարդան վարդապետ» անվամբ վկայված գործերն են որոշակի շփոթ և բարդություն ատեղծում դրանց Վարդան Ալգեկցուն, Արևելցուն կամ «Վարդան» անվամբ այլ հեղինակների պատկանելը ճշտելու հարցում, այնպէս էլ վերմագրային սկսվածքներում «Անանիայի վարդապետի ասացեալ» արտահայտությունն ունեցող մի շարք գործեր են շփոթության տեղի տվել, թե արդյոք Անանիա Նարեկացո՞ւմ, Սամահնեցո՞ւն, անգամ Ծիրակացո՞ւն և կամ էլ ԺԱ-ԺԲ դարերում ստեղծագործած մի քանի Անանիա վարդապետներից ո՞՛ո մեկի գրչին են պատկանում այդ գրվածքներից լուրաքանչյուրը: Անանիա Սամահնեցու գործերը Անանիաների այս շարժից զատորոշելու համար Քյուսեանը նախ քննում է ձեռագրային տեղեկությունները, և երկրորդ՝ թե այդ ստեղծագործությունները որքանով են համարում Հայրատ-Սամահնեան դպրոցի ավանդներին, Անանիա Սամահնեցու մեկնարաւանական մեթոդին և եկեղեցա-քաղաքական այն խնդիրներին, որոնց ուղղակի կամ անուղղակի արձագանքն ենք գտնում նրա բոլոր աշխատանքներում:

Համանման մոտեցմամբ այս գործի առաջին մասում վերլուծվում, իսկ երկրորդում քննական բնագրերն են քերվում Անանիա Սամահնեցու հետևյալ ստեղծագործությունների. Մայր Տաճարի՝ Վաղարշապատի կաթողիկենի ներբողյանի, Հովհաննես Մկրտչին և Պետրոս առաքյալի խաչելությանը նվիրված ճառերին և, վերջապես, «Հականառութիւն ի Անդրեմ երկարամակա» դավանարաւանական նշանավոր երկի:

Ի տարբերություն պատմագրության և Ժամանակի կենդանի կյանքի հետ հարաբերություն քարոզների ու գրական մի շարք այլ ժանրերի, դավանարաւանական և մեկնողական բնույթի գործերն առավել վերացարկված և ընդհանուր քրիստոնեական բնույթ ունեն և պահանջում են համարժեք քննություն: Այն լավագույնս կատարված է այս գրքում, ուր ներկայացվում են Անանիա Սամահնեցու աստվածաբանական ըլքրուումները, Զախանձախնդրությունը հայոց դավանանքի հանդեպ և մատնացուց են արվում ընդհանուր քրիստոնեական և մեր Եկեղեցու հայութի այն գործերը, որոնց վրա խարսխված են նրա գրածները թե՛ որպես մեկնարաւանական-քացատրական եղանակ, և թե՛ զրանցից կատարված տառացի բանաքաղական վկայակրոշումները, որոնք ցուց են տրվում երկայուն, միմյանց զուգադիր ընթացող համեմատությամբ:

Հեղինակը, սակայն, չբավականանալով բուն աստվածաբանական քննությամբ, ամերադառնում է նաև Ժամանակի հայ իրականությամբ թելադրված այն գործոններին, որոնք պայմանավորել են Անանիա Սամահնեցու ստեղծագործությունների գրությունը: Մանուկ Արեւյանը մեր հին գրականությունն անվանում է Եկեղեցաքաղաքական մաքառման գրականություն: Նոյն այս «մաքառման» արտահայտությունն է ներկայացվող գրքում ցուց տրվում «Հականառության» օրինակով, թե «քննույթով Եկեղեցաքաղաքանարամական, բայց ուստ էության գաղափարաքաղական այս աշխատանքը շատ կարևոր զենք էր ու միջոց» բյուզանդական «հարաճուն ճնշման դեմ հայ ժողովրդի՝ ազգային-եկեղեցական, քաղաքական ինքնորոշման և անկախության համար մղված պայքարի» (Էջ 111):

1700-ամյակի հանդիսությունների մեր օրերում առանձնակի կարևորություն և խորհուրդ ունի Անանիա Սահամբեցու հատկապես Վաղարշապատի կաթողիկեհն նվիրված ներքոյանը: Վերջինիս հանգամանալից քննությունում Քյուսեյանը եկեղեցական առումով ներքոյանի գրությունը պայմանավորում է թոնդրակեցիների դեմ այս շրջանում մղվող պայքարով, որի համար Եկեղեցուն տրվող բնորոշումներով միաժամանակ և ներքվում են Եկեղեցու հանդեպ թոնդրակեցիների ունեցած ըմբռնումները: Անանիա Նարեկացու «Ընդդեմ թոնդրակեցուց» գործի մետ տարվող զուգամիտով ցուց է տրվում, որ Անանիա Սահամբեցին ծանոթ է եղել այս ստեղծագործությանը: Քյուսեյանը վեր է հանում նաև ներքոյանի աղերսները ամսիկ գրականության, հունարան դպրոցի և վերջինիս ճարտասանական ու հյուսման արվեստի հունտորական-գեղագիտական ըմբռնումների մետ, որոնք վկայում են, որ այդ ավանդները կենտրոնակ են եղել նաև ԺԱ դարում, ուստի պատահական չեն նրանց մեծ տեղ գրավելը Հովհաննես Սարկավագի ստեղծագործություններում:

Ներբողի գրության երկրորդ պատճառը, որով և որոշվում է Արա գրության ժամանակը, Անիի անկումից մետու հոգևոր-քաղաքական իշխանության վերականգնման ձգտումն էր: Հատ այդմ այս ստեղծագործությունը պետք է գրված լինի 1045 թվականից մետու: Քյուսեյանի բնորոշմամբ Անիի անկումից մետու «Վաղարշապատին նվիրված» ամեն մի ստեղծագործություն ուղղակի կամ անուղղակի կերպով պետականության ու կենտրոնաձիգ իշխանության վերականգնման ուղղությամբ հայ ժողովորդի գործ դրած ճիգերի ու փայփայած քաղաքական իդեալների գեղարվեստական դրսերումն է դառնում», և որպես բնորոշ օրինակներ բերվում են Ստեփանոս Օքրելյանի Ողբը և Սիմեոն Երևանցու՝ Էջմիածնի նվիրված ներքոյական գործները (Էջ 22):

Մեր կողմից ավելացնենք ասվածի մետ հարաբերվող ևս մի պատճառը: Անիի անկումից մետու քամի որ Հայոց Հայրապետական Աթոռող մարմնավորում էր ազգային ողջ իշխանությունը, և որպեսի այն քաղաքական ակնկալիքների հրականացման խորհրդանշի չդառնա, Խաչիկ Բ Անեցի Կաթողիկոսի (1058-1065 թթ.) վախճանումից մետու բյուզանդական իշխանությունները թույլ չտվեցին, որ Կաթողիկոսական Աթոռող Անիու մնա, և այն տարագովեց Կիլիկիա: Հատ երևոյթին դեռևս Խաչիկ Անեցու հայրապետության շրջանում Անանիա Սահամբեցին կանխազգացել է այս վտանգը և Մայր Տաճարին նվիրված ներքոյանով ցանկացել մեկ անգամ ևս շեշտել Վաղարշապատի կաթողիկեի նվիրականությունը, Հայոց Եկեղեցու ավանդական հոգևոր կենտրոնը վերասին Հայոց Եկեղեցու վարչական կենտրոն տեսմելու ձգումամբ:

Այս ներքոյանը կարևորվում է ոչ միայն իր գեղարվեստական արժանիքներով և ժամանակի ըմբռնումները ներկայացնելով, այլև նրանով, որ լուրջորինակ անդրադարձն ու մեկնարանությունն է Գրիգոր Լուսավորչի տեսիլի և ըստ այդմ, որպես ԺԱ դարի գործ օգնում է Ս. Էջմիածնի մետ կապահ մի շարք հարցերի միշտ լուսաբանմանը: Բերենք բնորոշ մեկ օրինակ. բանահրության մեջ հաճախ այն կար-

ծիքն է հայտնվում, որ Ազգաթանգեղոսի «այր մի ուռնավոր» խոսքերը վերաբերում են ոչ թե Աստծու Միածին Որդուն, այլ Աստծու տեսչությանը, այսինքն Աստծու հրեշտակին: Հաս այս, անտեսելով Սահմակ Ձորափորեցու Ը դարում գրած շարականի «Էջ Միածինն ի Հօրէ» խոսքերը, ասպում է, թե Լուսավորչի տեսլիում ասվածը որպես Աստծու Միածին Որդու էջք է սկսվել մեկնարանվել ԺԳ-ԺԴ դարերում, այսինչ ԺԱ դարում գրված այս ստեղծագործությունում ևս հստակորեն ասվում է, որ Քրիստոս Կործանեց սանդարամետի տաճարը. «Քանզի ահազին ճայթմանէ բախման ուռնաձեռ ոսկիաձոյլն ձայնատուի՝ սարսեալ սաքրեցին մեծաւ դողմամբ հոյլք խաւարային անդնդասոյց այսոցն բազմութեամ՝ յանկարծ յեղակարծում ժամու առատաքար տեսանելով հեղեալ, սփոնեալ, տարածեալ զշնորհս մարդասէր ողորմութեանն Քրիստոսի առ իր արարած» (Էջ 143):

Սահմակ Ձորափորեցու շարականի «Քանզի ի ամա ծագեաց մեզ լոյս ի Հայատան աշխարհի» տողի արձագանքն է Անահիա Սանահինեցու Աերբողի մեկ այլ պարբերությունը, ուր վերստին այն միտքն է շեշտվում, թե Էջմիածնի կաթողիկենից մեզ ծագեց Հայոց աշխարհի փրկության լույսը «Դու զթանձրամած խաւարն կուպաշտական աղջամդջին նսեմութեան փարատեցեր եւ զհաստատարած գերազանցիկ լուսոյն զճառազայթս անձառ եւ անհատ սիրոյն Քրիստոսի յերկրի մերում սփոնեալ, ծաւալեալ տարածեցեր» (Էջ 144):

Ամփոփելով ասենք, որ այս հատորը, ուր բերված են թե՛ Սանահինեցու՝ մեզ հասած երկերի բնագրերը, և թե՛ Արանց համակողմանի վերլուծությունը, ընթերցողին մեծաանս օգնում է ճիշտ հասկանալու հայ մեկնարանական ու դավանաբանական գրականության ձևակորման ընթացքի առանցքային մի շարք հարցեր՝ արծարծված այն ժամանակահատվածում, որը յուրօինակ կապող օղակ էր դառնալու Ռոկեդարից մինչև Բագրատունյաց Վերածնություն ձգվող շրջանի ու Կիլիկյան Հայաստանի գրականության միջև:

## ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

